

Բայց ով կրնար գուշակել թէ Կոյտի Մատենադարանն իր վախճանումէն 1 1/4 դար ետքը հասարակաց Մատենադարանի մը մէջ հիմնական եւ իրական տեղ մը պիտի բռնէր:

Մատենադարաններ կամ նախնեաց բացատրութեամբ, «արկեղք գրոց», Հայոց մէջ, վաճառքերու եւ եկեղեցիներու ճիշդ քովը կը գտնուէին: Այսինքն՝ գիրքն ու գրիչը ուր որ կը գործածուէր, բնական է որ հոն կ'ըլլար նաեւ գրքերուն եւ թղթերուն տեղը: Եկեղեցականներ՝ իբր մշակ մատենագրութեան՝ մեր մէջ մասնաւորապէս շեշտած են այս իրողութիւնը: Եւ այս է պատճառը որ ձեռագիրներու եւ նոյն իսկ առաջին տպագիրներու յիշատակարաններու մէջ կը հանդիպինք մատենագիրներու եւ գրիչներու (= գաղափարող, ընդօրինակող), որ անհրաժեշտ ու անխուսափելի կերպով կը յիշեն այն սրբավայրերը, որոնց քով կամ անոնց հովանոյն տակ («ընդ հովանեաւ», «առ դրան» եւ այլն) մատենագրած են կամ գաղափարած:

Կ. Պոլսոյ մէջ գրեթէ բոլոր մեծ եւ հնագոյն եկեղեցիներ ունեցած են իրենց գրադարանները ոչ միայն եկեղեցական գրքերու, այլ նաեւ պատմական, մատենագրական, եւ այլն, գրքերու համար: Դեռ այսօր՝ Օրթագիւղի, Պալատի, Իւսկիւտարի (Ս. Խաչ) եկեղեցիները, ասոնք իմ գիտցածներս են, բաւական ձեռագիրներ ունին. օւնին նաեւ տպագիրներ. այսինքն՝ փոքրիկ մատենադարաններ: Եւ ասոնցմէ Օրթագիւղի Եկեղեցւոյ «Թանգարան»ը (= Մատենադարանը) նոյն իսկ բաւական լաւ կարգադրուած վիճակ մ'ունի:

¹ Կենթագրեմք որ Ս. Լուսաւորիչն (Ղալաթիա) ալ ունեցած ըլլայ իր գրադարանը՝ յիշեալ եկեղեցիներուն պէս: Թէեւ Եկեղեցւոյ արդի վիճակը ո՛ր եւ է երաշխաւորութիւն չտար այս մասին, բայց մենք կ'ենթագրենք խորհելով թէ 1. Ս. Լուսաւորիչ Պոլսոյ ամենէն հին հայ